— Հիւբբին: Այսպէս կոչում են նրան:

Հիւբբին ճանաչեց թէ ինձ եւ թէ Մարօին :

— Եկէք, գուշակեմ ձեզ համար, — նա դարձաւ դէպի մեզ ժպտելով: — Ձեզանից փող չեմ առնի:

— Երբ եկար այստեղ: Ու՞ր է քո մայրը, — սկսեցի ես շփոթեցնել նրան զանազան հարցերով:

Դեռ նա պատասխան չտոած, յայտնոեցաւ Սուսանը, կասկածաւոր կերպով նայեց իմ երեսին, մռմռաց դէպի Հիւբբին մի քանի անհասկանալի խօսքեր: Փոքրիկ վհուկը վայր թռաւ ժայռից, որի վրայ նստած էր, եւ երկուսը միասին անյայտացան գիշերային խաւարի մէջ :

— Ինչո՞ւ նրանք փախան, երբ տեսան մեզ, — հարցրուց Մարօն:

— Չեմ իմանում: Պառաւ կախարդը միշտ զգուշանում է, որ Հիւբբին ինձ չհանդիպէ, — պատասխանեցի ես:

— Իստա՛կ սատանայ է այդ աղջիկը, — ասաց Մարօն:

— Նա հաւատացնում էր, թէ իր մայրը գողացել է նրան դեւերի օրօրոցից, — մէջ մտաւ մի աղջիկ, որ կանգնած էր մեզ մօտ: — Դրուստ է ասում, եթէ դեւիկ չլինի, մի այնքան պստիկ երեխան կարո՞ղ է ամէն բան գիտենալ: Նա ասաց ինձ բոլորը, ինչ որ կար իմ սրտում, ինչ որ ես արել էի...

Երբ հեռացանք բազմութիւնից, Մարօն ինձ ասաց.

— Կամ Կարօն, կամ նրա ընկերներից մէկն այստեղ պէտք է լինի:

— Դու ինչի՞ց ես իմանում:

— Այդ կախարդ կինը եւ փոքրիկ վհուկը միշտ հետեւում են նրանց: Որտեղ որ Կարօն լինում է, դրանք այնտեղ իսկոյն յայտնւում են:

— Ես չեմ հասկանում, Կարօն եւ իր ընկերներն ի՞նչ գործ ունեն այդ բոշաների հետ:

— Ես էլ չեմ հասկանում, — պատասխանեց Մարօն: — Բայց մի բան ասեմ քեզ, Ֆարհատ, այն փոքրիկ վհուկը, որին կոչում են Հիւբբի, հայերէն խօսում է եւ խօսում է ինչպէս մի հայ:

— Բոշաներն ամէն լեզուով խօսում են:

— Դա նրանց նման չէ: Մի անգամ ես ասեցի՝ Հիւբբի, ե՛կ մեր տանը մնա՛, ես քեզ կը պահեմ, ինձ քոյր կը շինեմ: Նա ինձ ասաց, «չէ, ես մօրս մօտ պիտի գնամ, մայրս ինձ շատ է սիրում|: Այս խօսքերը նա ասաց հայերէն լեզուով, բայց պառաւը հէնց որ լսեց, բարկացաւ, շուտով հեռացրուց Հիւբբիին: